



# ԴԵՄՊԱՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԵՒ ՎԵՐ. ԳԱՐԱԿԵՐՉԵԱՆԻՆ

Լիբանանի մէջ հայաստանի դեսպան Արման Նարատարդեան երէկ այցելութիւններ փութաւ Լիբանանի հայոց թմի առաջնորդ Գեղամ Էոյս. Խաչերեանի եւ Մերձատր եւ Միջին Արեւելքի հայ Անկախական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի:

## ՀՐԱ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Վարչապետ Սեյիմ Հըս երէկ յայտարարեց, որ պիտի շարունակէ ազգային գործունէութիւն ունենալ առանց քաղաքական աշխատանք տանելու: Ան հաւատարմեան, որ ոչ երեսփոխանական, ոչ նախարարական, ոչ ալ վարչապետական դիրք կ'ուզէ:

Հըս ընդգծեց կարեւորութիւնը լիբանանեան շարքերու միութեան եւ միարձանութեան, որոնք կարելի դարձուցին հայրենի հողի ազատագրումը: Ան մերժեց արժարձել լանազը հարակալին սահմաններուն վրայ տարածելու առաջարկները, նկատել տալով, որ լանազը չէ եղած եւ պիտի չդառնայ Իսրայէլը պաշտպանող ոստիկան ուժ մը:

## ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԵՆԹԱՍՊԱՅ ՍԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ

Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր անօրէնութիւնը երէկ յայտարարեց, որ նախանշուած գիշեր երեք ինքնաշարժներով Խրպէթ Քանաֆաբէն անցնող ակազակախումբ մը փախուտ տուած է դէպքին վայրը գտնուող ոստիկաններու անցարգելիք վերականգնելու օստիկաններէն մին:

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԸ

Հանրապետութեան միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի գերիներու օրուան տօնին առթիւ ուղղած իր պատգամին մէջ կրօնական պարտք համարեց Արսա մկիթի, Երուսաղէմի եւ Պաղեստինի ապատագրումը:

# ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵՑ...

Շարունակուած Ա. Էջէն

Նապիլ Պուսթանի, Ժորժ Տիպ Նամէ, Էլի Աուհ, Սլաւոտին Թրոնո, Ֆուատ Սաատ, Աքրամ Շրիալէպ, Այման Շքէյր, Ապտալա Ֆարհաթ, Սալահ Հընէյն, Նամմէ Թամմէ, Պաւսէմ Սապրի, Անթուան Անտրուս, Մոհամէտ Համար:

ամբողջացում, ապա տարուած եւ իրաւապարտ շրջաններու բարգաւաճում, պետական վարչամեքենայի եւ դատական իշխանութեան պարկեշտութիւն, ապատութիւններու պահպանում, տնտեսական եւ ընկերային հարցերու լուծում:

մախմբում»ին անունով (Մոհամէտ Քապպա, Մորիս Ֆատէլ, Մոհամէտ Սաֆաթի), Քապպա յայտնեց, թէ առաջարկած են Հարիւրին:

մէն ներս, որ պէտք է ըլլայ ազգային համախոհութեան կառավարութիւն:

լծուիք աշխատանքի գործակցելով հանրապետութեան նախագահին հետ, կապուելու համար մարտահրաւերները դիմագրաւելու կարող կառավարութիւն մը», ըսաւ Հարիւրին:

Ժողովրդային պլոքի անդամներէն Էլի Աքաֆի, Նիքոլայ Ֆարթուշի եւ Ճորժ Գասարճի անունով Ֆարթուշ յայտնեց, թէ առաջարկուած է Հարիւրի անունը:

Արեւմտեան Պեքալի պլոքի անդամներ Սամի Խաթիպի, Ռոպէր Դաննի եւ Յայսալ Տաւուտ անունով Խաթիպ ըսաւ, որ այս հանգրուանին մարտահրաւերները դիմագրաւելու ատակ միակ անձը Հարիւրի է:

«Հիւսիսի Խմբակ»ին (Սլէյման Ֆրէճի, Նաժիպ Միհամէտ Եաղի, Իպրահիմ Պալան, Մասուտ Հուճայրի) խօսք տուաւ Մոհամէտ Ռաատ, որ յայտնեց, թէ պլոքը թեկնածու չէ ներկայացուցած, այլ պահանջած է, որ յաջորդ վարչապետն ու կառավարութիւնը շարունակեն դիմադրութեան եւ ազգային միասնութեան ընտրանքը՝ հետապնդելով ապատագրումը:

«Տոնող Պալան»ին (Սլէյման Ֆրէճի, Նաժիպ Միհամէտ Եաղի, Իպրահիմ Պալան, Մասուտ Հուճայրի) խօսք տուաւ Մոհամէտ Ռաատ, որ յայտնեց, թէ պլոքը թեկնածու չէ ներկայացուցած, այլ պահանջած է, որ յաջորդ վարչապետն ու կառավարութիւնը շարունակեն դիմադրութեան եւ ազգային միասնութեան ընտրանքը՝ հետապնդելով ապատագրումը:

«Կր գտնուիք նոր հանգրուանի առջեւ, որուն ընթացքին պիտի գործենք ազգային համախոհութեան նպատակով» պատգամ տուաւ Սեյիմ Հըս:

# ՆՇԱՆԱԿԵԱԼ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ ԵՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ՝ ԱՅՍՕՐ

Նշանակեալ վարչապետ Ռաֆիք Հարիւրի այսօր եւ վաղը երեսփոխաններուն հետ միասին կատարել խորհրդակցութիւններ հեպտեմի ժամանակացուցով:

12:00 - «Մեթնի Հաւաքարմութիւն» զուարթութիւնը: 12:15 - «ժողովրդական պարտեան Հանդիման» զուարթութիւնը: 12:30 - Հրգողայլայի զուարթութիւնը: 12:45 - «ժողովրդային» զուարթութիւնը: 13:10 - Արեւմտեան Պեքալի զուարթութիւնը: 13:25 - Հիւսիսի Համախումբը: 13:40 - Թրիփոյի Համախումբը: 13:55 - «Արժանապատուութիւն եւ Քարէ փոխում» զուարթութիւնը: 17:00 - «ժողովրդային» զուարթութիւնը: 17:15 - Պաաս Կուսակցութեան զուարթութիւնը: 17:30 - Փաղանգուար Կուսակցութեան զուարթութիւնը:

17:45 - Ղովմի Կուսակցութեան զուարթութիւնը: 18:00 - Հայկական Երեսփոխանական Ղուբ Երեսփոխաններ Սեպուհե Յովհաննէան եւ Ճորժ Գասարճի: 18:15 - Երեսփոխան Ալոյէր Մուխայթէր: 18:25 - Երեսփոխան Նալիլա Մուսապա: 18:35 - Երեսփոխան Միխայիլ Տահէր: 18:45 - Երեսփոխան Ռաժիպ Արապի: 18:55 - Երեսփոխան Ալոյէլ Ռահիմ Մրապա: 19:05 - Երեսփոխան ժողովրդային Քապպա: Վաղը այլ երեսփոխաններ ընդունելէ առաջ, Հարիւրի զուարթութիւնը Սեյիմ Հըսի:

ՀԱՐԻՐԻ ԵՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆԱԿԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐՈՒ

## ԾԱՆՈՒ ԶԱՐԿԱՐԱՄԻՆ

• Զալքա, 155 քառ. մետր տարածութիւն, 5րդ սերնէ, 3 ննջարան, հիւրանոց, ճաշասենակ, զոյգ բաղնիք, լծան կահաւորուած խոհանոց, սեփական ջեռուցիչ, հեռաձայն, 2 կառատուն: Գին՝ 62,000 տոլար: Ելեռ: 03 - 2221 24:

**ՅԵՏԱԶՈՒՄԸ**  
«Ազիրեան» ակումբի կազմակերպած վիճակահանութիւնը, որ տեղի պիտի ունենար Երեւանի, 26 Ղոկտեմբեր 2000ին, յետաձգուած է: Նոր թուականը կը ծանուցենք մանուկով:  
«ԱԶԻՐԵԱՆ» ԱԿՈՒՄԲԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԸ

**ՍՏԱՅԱՆՔ**  
• «ԾԱՌԿԱՅԵՐՈՒ ՊԵՍ»  
Հեղինակ՝ ԶԱՐԵԶ ԽՐԱԽՈՒՆԻ ՊՈԼԻՍ, 2000  
• «ԴԻՍԱԿԻ ԵՏԵՒ»  
Թատերախաղ 3 տեսիլ  
Հեղինակ՝ ԶԱՐԵԶ ԽՐԱԽՈՒՆԻ ՊՈԼԻՍ, 2000

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՍԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴ

**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՍՈՒՏ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղի սկառուակայն վերամուտի առաջին հաւաքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 29 Ղոկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 9:00ին, Սգիտի «Եղիշէ Մանուկեան» նորակառոյց ակումբին մէջ:  
Ծնողներուն եւ տարագաւորներուն ռազմապետական կոլեկտիւ յանձնելու, որ այսուհետեւ սկառուակայն հաւաքները տեղի պիտի ունենան նորակառոյց ակումբին մէջ:  
Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՍԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՍՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԹՈՒՐԵՐԱ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ՊԻՏԻ ՔՆՆԱՐԿԷ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՔԱՅԼԸ

ԱՆԳԱՐԱ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ սահմանադրական ատենանք պիտի քննարկէ ընդդիմադիր զլիաւոր իսլամական կուսակցութեան գործունէութիւնը արգիլելու քայլը, կառավարական կենսական շարք մը հրամանագիրներու դէմ օրինական մարտահրաւերներու հարցը լուծելէ ետք, յայտնեց ատենանի նախագահը, Երկուշաբթի օրը:

Սահմանադրական ատենանք այս որոշումը կը յետաձգէ վճիռ մը, որուն սերտօրէն պիտի հետեւին Թուրքիոյ արեւմուտեցի դաշնակիցները եւ յատկապէս՝ Եւրոպական Միութիւնը, որուն Թուրքիա կ'ուզէ անդամակցել:

Դատաւարներ ատենանի առաջարկած են իսլամական Առաքինութիւն կուսակցութեան գործունէութիւնը արգիլել, ըսելով, թէ անիկա աշխարհիկ կարգերու սահմանադրութիւնը բռնադատած է:

Կուսակցութիւնը արգիլելու քայլը ահապահ պիտի հնչեցնէ արեւմուտեցի դաշնակիցներուն մօտ, որոնք Թուրքիոյ մէջ խօսքի ազատութիւն կը պահանջեն: Անիկա նաեւ երկփեղկող ազդեցութեամբ մասնակի ընտրութիւններու դուռ կ'ընդ բանայ:

Սահմանադրական ատենանի նախագահը՝ Մուսթաֆա Պուժմի, թղթակիցներու յայտնած է, թէ ատենանք կառավարական հրամանագիրներու դէմ օրինական մարտահրաւերներու գծով վճիռ պիտի կայացնէ նախքան Առաքինութեան հարցով զբաղելը:

ԸՍՏ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՍԱՏՏԱՍ ԻՐ ՀԱՃՈՅՔԻՆ ՀԱՄԱՐ ՄԵԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԿԸ ՄՍԻԷ

ԼՈՍՏՈՆ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Բրիտանիա կ'ամբաստանէ Իրաքի նախագահ Մատում Հիւսէյնը, դիտել տալով, որ ան շտապօրէն կը ծախսէ իր անձնական հաճոյքներուն եւ վայելքին համար, մինչ իր ժողովուրդը կը ստատակի տնտեսական պատժամիջոցներու ծանրութեան տակ:

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար Փիթըր Հէյն ըսաւ, որ Մատումը շքեղ համալիր մը կառուցած է Սարսարի ամրոյն, Պաղատին 435 քմ. դէպի արեւմուտք: Համալիրը կ'ընդգրկէ մասնաւոր հիւանդանոցներ, կրօնավայրեր եւ որսատեղի մը: Այս համալիրը օգտագործելու իրաւունքը ունին Մատումի համակրանքն ու վստահութիւնը վայելող բարձրաստիճան պաշտօնատարները:

Հէյն մատնանշեց նաեւ, որ ՄԱԿի կողմէ պատրաստուած տեղեկագիր մը ցոյց կու տայ, թէ ամէն ամիս Իրաք կը ներածէ միլիոններով սիկարէթ եւ հալալարուր լիթոնով ոգելից ըմպելի. այն պահուն, երբ կը գանգատի. թէ մարդասիրական եւ անհրաժեշտ պէտքերը կը պակսին երկրին մէջ: Հէյն անդամացնել տագնապը:

ՊՈՒԹԱՖԼԻԵՍ - ԲԱՉԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԹՈՒՆՈՒԶ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Ալեքիոյ նախագահ Ապտէյազիզ Պուսթաֆիլթա արարական վեհաժողովին մասնակցելէ ետք Լիպիա այցելեց, տեսակցութիւն ունենալու համար Մուսամմար Քադաֆիի հետ, հաղորդեց Լիպիոյ ռատիոկայանը Երկուշաբթի օրը:

Ռատիոկայանին կողմէ սփռուած լուրը կը յայտնէր, որ Քադաֆի եւ Պուսթաֆիլթա քննարկած են երկկողմանի գործակցութեան թափ տալու կարելիութիւնները: Անոնք խորհրդակցած են նաեւ կարիքեան ցամաքամասը յուզող հարցերու եւ արարական աշխարհի ներկայ իրավիճակին մասին:

Քադաֆի չմասնակցեցաւ Գահիրէի վեհաժողովին, որովհետեւ համաձայն չէր հրապարակուելիք «տկար» յայտարարութեան:

ՕԼՊԻԱԾԹ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱ ԿՍՅՅԵԼԷ

ՓԻՆԿԵԱՆԿ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատլէյն Օլպրայթ Երկուշաբթի օր պատմական տեսակցութիւն մը ունեցաւ Հիւսիսային Քորէայի ղեկավար Քիմ Ժոնկ - Իլի հետ եւ յայտնեց, թէ Ուաշինկթըն գուշակ մտտեցում կը ցուցարբերէ համաձայնար այդ պետութեան մերձեցումին նկատմամբ:

Քիմ Ջեմօրէն ընդունած է Օլպրայթը, դիտել տալով, որ իսկապէս ուրախ է:

Թէեւ Օլպրայթի երկօրեայ այցելութեան ընթացքին չինախտեսուելի, որ համաձայնագիրներ կնքուին, սակայն արտաքին գործոց նախարարը պիտի թելադրէ նախագահ Պիլ Քլինթոնի կողմէ այցելութիւն մը տալ կամ ոչ, ըսած է ամերիկացի ռադիօաստիճան պաշտօնատար մը, աւելցնելով, որ այդ առիթով թերեւս կարգ մը համաձայնութիւններ կ'ընեն կնքուի:

ՄՈՍԿՈՒԱ - ԿԱՐՇԱԿԱ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԿԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԻ ԸԱՐՑՈՎ

ՄՈՍԿՈՒԱ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին փոխ վարչապետ Վիթթոր Սրիստանովի պատասխանատու նշանակած է քանակութիւններու՝ աւելցնելու համար Երկուշաբթի օրը:

Սրիստանով «Վեւեմ-մոսկով» թերթին յայտնած է, թէ Փութին իրեն հրահանգած է լայնածիր քանակցութիւններու սկսիլ Լեհաստանի իշխանութիւններուն հետ՝ համակարգելու համար Ուքրաինայի շրջանցող կապտար խողովակի մը կառուցումն աշխատանքները:

Ռուսական «Կապիտոլ» ընկերութիւնը անցեալ շաբաթ յայտնած էր, թէ «առաջադրութեան գիր մը» կնքած է գերմանական, ֆրանսական եւ իտալական երեք ընկերութիւններու հետ՝ ստեղծելու համար դէպի արեւմտեան Եւրոպա կապի արտածման նոր խողովակ մը, որ Ուքրաինայի պիտի շրջանցէ:

Ուքրաինա անտեսած է մտավախութիւնները, թէ ծրագրը կրնայ հարուածել իր տնտեսութիւնը, մինչ Լեհաստան, որուն համաձայնութիւնը կենսական է, միջապային:

խորհրդածողովի մը կայացումը առաջարկած է՝ խնդրոյ առաջարկայ բոլոր երկիրներու մասնակցութեամբ:

Տնտեսութեան նախարարութեան մէկ հաղորդագրութիւնը յայտնած է, որ Լեհաստան դէմ կը մնայ որեւէ ծրագրի, որ կրնայ արգելակել «Եամպ» խողովակին երկրորդ բաժնի կառուցման ամբողջականացումը եւ նպաստաւոր չի նկատել «Կապիտոլ» Ուքրաինայի շրջանցող խողովակի կառուցման նկատմամբ:

Սակայն Սրիստանով լայնատեսութեամբ արտայայտուած է խողովակին կարելիութիւններուն մասին, 1993ին Վարշաւայի հետ կատարուած էր, թէ «առաջադրութեան մը պատճառով: Անոնք համաձայնած են հիւսիսային բեւեռային Եամպ թերակղզիին խողովակի մը երկու բաժնիներուն շուրջ, որոնք միասնաբար տարեկան 67 միլիոն խորանարդ մետր բնական կապ պիտի մղէ:

Սրիստանով ըսած է, որ խողովակին մէկ բաժնի Պիլիտուսիային կ'անցնի: «Այժմ հարաւարեւմտեան բաժնին կարգը հասած է», Լեհաստան, որուն համաձայնութիւնը կենսական է, միջապային:

Ան յայտնած է, որ խողովակը Ռուսիոյ

կողմէ կնքուած երկար տեւողութեան վրայ հայտարարուած էր ու գծով պայմանագրութիւններ պիտի ապահովէ մինչեւ 2020 թուական:

ՈՌՈՒՍԱ ԿՈՂՁԷ ՌԻՔՐԱՆԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԸՎԱԿԱԿՆԵԼ

Սրիստանով ըսած է, որ Փութին իրեն հրահանգած է Ուքրաինայի հետ լայնածիր քանակցութիւնները շարունակել եւ 2001ի համար կապի հայտարարութեան մը պայմանագրութիւն մը կնքել, ինչպէս նաեւ՝ քանակցի Ուքրաինայի կապտար խողովակներու միացեալ տնօրինումին գծով:

«Ներկայիս մեր կեցածը այն է, թէ միացեալ տնօրինումը կարելի է միայն, եթէ Ուքրաինայի կապի փոխադրութեան դրութիւնը հակակշռող ընկերութիւններու համախմբումին 51 առ հարիւր «Կապիտոլ»-ի ձեռքը ըլլայ», յայտնած է ան:

Սրիստանով ըսած է նաեւ, որ Փութին իրեն հրահանգած է ուսումնասիրել կարելիութիւնը՝ Ուքրաինայի ելեկտրական ուժաբաշխման համակարգին հետ միացնելու:

Սրիստանով ըսած է, որ խողովակին մէկ բաժնի Պիլիտուսիային կ'անցնի: «Այժմ հարաւարեւմտեան բաժնին կարգը հասած է», Լեհաստան, որուն համաձայնութիւնը կենսական է, միջապային:

Ան յայտնած է, որ խողովակը Ռուսիոյ

ՎՐԱՍԱՆ ՄՏԱԾ ԶԵՉԵՆ ԸՍԲՈՍՏՆԵՐՈՒՆ ՄԵԾ ՄԱՍԸ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԵՂԱԾ Է Կ'ԸՍԷ ԵՏԻՄՐՏՆԾԷ

ԹԻՖԼԻՍ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Վրաստանի նախագահ Էտուարտ Ծեւարտանով Երկուշաբթի օր յայտնած է, թէ Չեչենիայէն Ուրբաթ օր Վրաստան մտած չեչեն անցնելու 60 ըմբոստներու մեծամասնութիւնը անձնատուր եղած է, եւ թէ հարցը քանի մը օրէն պիտի լուծուի:

Չեչենիայի մը մէջ Չեւարտանով ըսած է նաեւ, որ պաշտօնատարներ կը շարունակեն բանակցիլ մնացեալ ըմբոստներուն հետ:

Վրացական պատկերասփիւռը Կիրակի օր հաղորդած էր, թէ ըմբոստները ուզած են վրացական հողամասերէն Ազրպէյճան կամ Թուրքիա անցնիլ:

Չեւարտանով շեշտած է, թէ վճարակներէն պահանջած է, որ այս հարցը խաղաղ միջոցներով, առանց արհեստհեղուքութեան լուծուի:

Ան անելուցած է, որ 20էն 25 ըմբոստներ բժշկական անմիջական խնամքի կը կարօտին, եւ թէ անոնք պիտի դարմանուին Երկուշաբթի օրը:

Երկրին սահմանապահ ուժերուն մէկ բաժնեւոր յայտնեց, որ կարգ մը ըմբոստներ Թիֆլիսի մէկ հիւանդանոցը փոխադրուած են:

ԱՅԿԱՆԻՍԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԺԱՐԺՈՒՍԸ ԿԸ ՊԱՇԱՐԷ ԹԱԼՈՔԱՆԸ

ՅԱՅՉԱՊԱՍ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Աֆղանիստանի ընդդիմադիր շարժումը Երկուշաբթի օր յայտարարեց, որ երեք կողմէ պաշարած են Թալիքան քաղաքը, որ քանալի դիրք ունեցող կեդրոն մը կը նկատուի:

Ընդդիմադիր ճակատի մէկ բաժնեւոր ըսաւ, որ Ահմետ Շահ Մատուտի ուժերը գրաւած են Թալիքանի արեւմուտքը գտնուող կամուրջ մը՝ խլելով Թալիքանի եւ Թալեպանի հակակշիռին ենթակալ այլ քաղաքի մը՝ Քունտուպի միջեւ հաղորդակցութիւնը: Թալիքան, որ ընդդիմադիր ճակատի միջնաբերդին մէկը կը նկատուի, անցեալ ամսուան ըմբոստներու գրաւումէ երթալիս իսլամական ուժերուն կողմէ:

Աֆղանիստանի նախագահ (ՄԱԿի կողմէ ճանչցուած) Պուրհանուտին Ռապպանի յայտարարեց, որ Թալեպանի դէմ պատերազմը պիտի շարունակուի: Ռապպանիի ուժերուն հակակշիռին տակ կը գտնուի Աֆղանիստանի հինգ առ հարիւր միայն:

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՏՈՒՆ ՏՈՒՈՂ...

Շարունակուած Ա. Էյեֆի տի հետեւանք է: Անոնք անդրադարձան նաեւ ներքին գաղթին, այսինքն՝ մարգերէ դէպի մայրաքաղաք Երեւան գաղթին աւելուող հարցերու:

Նոյն օրը Պ. Մաք Քինլի հանդիպում ունեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ:

Հանդիպումին քննարկուեցան նոր աշխատավայրեր ստեղծելու միջոցով արտագաղթի նուազեցման ուղղուած միացեալ ծրագիրներու իրագործման կարելիութիւնները:

Նախարար Օսկանեան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացի ներկայ փուլը: Մաք Քինլի պատրաստակամութիւն յայտնեց օժանդակելու տագնապի խաղաղ լուծման գործընթացին, մասնաւորաբար՝ գաղթականներու հարցերու լուծման ուղղութեամբ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՇ ՓՈՔՐ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ՎԱՅԵԼԷ

Մ. Նահանգներու նախագահութեան թեկնածու Շոք Տապրինու Պուշ կը թոյլ փոքր առաւելութիւն մը անբապնդած ըլլալ դեմոկրատ թեկնածու Այ Կորի դէմ, մինչ ընտրապայքարը կը թնայոյի իր վերջին համգրքանքը:

Երկու թեկնածուներուն միջեւ անցեալ Երեքշաբթի օր կայացած երրորդ եւ վերջին բանավճակ ի վեր, Թեքսասի կառավարիչը փոքր, սակայն կենսական առաւելութիւն մը ձեռք ձգած է, մինչ Նոյնմբեր 7ի ընտրութիւններուն հազիւ 16 օր մնացած է:

Պուշ Կորի հետ բաղդատած ՅԸՄ 11 առ հարիւր առաւելութիւն արձանագրած է կայացած բոլոր հարցախոյզներուն մէջ: «Ռոյթըր» - «Էմ. Էս. Էն. Պի. Սի.» հարցախոյզի արդիւնքներուն համաձայն, Պուշ 41 առ հարիւրի դէմ 45 առ հարիւրով առաջնահերթ է: «Կանաչ» Կուսակցութեան թեկնածու Ռայֆ Նատոր 5 առ հարիւր ապահոված է, Բարեկարգական Կուսակցութեան թեկնածու Փլք Պիտերսըն՝ 1 առ հարիւր, մինչ քուէարկողներու 7 առ հարիւր տակաւին որոշում չ'է կայացուցած:

(ԴՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՆ ԷՇՔԵՒԱՐԻԻ ԴԵՄ ՎՃԻՌԸ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ԵՆԹԱՐԿՈՒԻ

ԹԵՀՐԱՆ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Իրանի կրօնաւորներու մասնաւոր ատենանք զլիաւոր դատախազը յայտնեց, որ պիտի պահանջէ վերատեսուութեան ենթարկել այլախոհ կրօնաւոր Հասան Եուսէֆի էջեբարի դէմ արձակուած վճիռը, հաղորդեց «Համապատկի» օրաթերթը Երկուշաբթի օրը:

Էջեբարի ձեռնարկուած էր Օգոստոս Ծին, երբ վերադարձաւ Պերլինէն, ուր մասնակցած էր Իրանի բարեկարգումներու ապագային մասին կազմակերպուած խորհրդակցութիւնը: Ան ամբաստանուած էր հաւատարմութեան, փոստութեան տարածման եւ Աստուծոյ դէմ պատերազմ յայտարարած ըլլալու յանցանքով: Կրօնաւորներու յատուկ ատենանք դատաւարութիւնը աւարտած էր անցեալ շաբաթ եւ վճիռի մը յանգած՝ սակայն այդ վճիռը տակաւին չ'է հրապարակուած:

Գլխաւոր դատախազ Ղոլամհոսէյն ԷՃէյ ըսաւ, որ վերատեսուութեան դիմում պիտի ներկայացնէ, որովհետեւ վճիռը հակասական բաժնիներ ունի: ԷՃէյ ըսաւ սակայն, թէ ինչ է վճիռը:

●5,3 ԱՄՏԻՃԱՆԻ ինքրորդ ուժընութեամբ երկրաշարժ մը Երկուշաբթի օր հարուածեց Իրանի արեւելեան շրջանը, ի որասան նահանգին մէջ: Չոհեր եւ վիրաւորներ չարձանագրուեցան:

ՄՈՍԿՈՒՅՑԻ ՄԵՉ ՓՈՒԹԻՆ ՊԻՏԻ ԸՆԴՈՒՆԻ ԲՈՇԹՈՒՆԻՑԱՆ

ՄՈՍԿՈՒԱ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտնած է, թէ այս շաբաթ Մոսկուայի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենայ Եուկոսլաւիոյ նորընտիր նախագահ Վոյսլաւ Բոշթոնիցայի հետ, հաղորդեցին ռուսական լրատու գործակալութիւններ, Երկուշաբթի օրը:

Կառավարութեան մէկ նիստէն առաջ, Փութին ըսած է, թէ Եուկոսլաւիոյ վերաբերեալ «տարբեր մարզերու մէջ բարգաւաճման ծրագիր մը ունինք»:

Ըստ «Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան, տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ օրը:

Ռուսիա մերժած էր միանալ Արեւմուտեցի նախկին նախագահ Սլոպոտան Միլոշեւիչի վրայ ճնշում բանեցընելու համար:

Սակայն Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով օտար քաղաքական առաջին անձնաւորութիւնը եղած էր, որ Պելկրատ այցելած էր, Բոշթոնիցայի անցեալ ամսուան յաղթանակէն ետք:

ԵԿԻՊՏՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՐՅԱԿԻՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԿԵՏԵՒՐԴՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐ

ԳԱԶԻՐԷ, 23 (ԴՈՅԹԸՐԸ).- Տանձնակ վիրաւորներ ինկան Եգիպտոսի մէջ Երկուշաբթի օր, երեսփոխանական ընտրութիւններու մրցակից թեկնածուներու միջեւ ծագած կռիւի մը ընթացքին, հաղորդեցին ապահովութեան ազգային ինքնապաշտպանութիւնը:

Յիշալ աղբիւրները յայտնեցին, որ ընտրութիւններու առաջին հանգրգումին յաղթանակի քայլարշաւ մը կազմակերպուած էին Ֆալուստի մէջ, երբ մրցակից թեկնածուի մը երեսփոխանները կրակ բացին յաղթանակ կողմին վրայ:

ՄԵՐ ԸԵՏ ԿԸ ՍԿՍԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ TS, BT, մասնագիտական արհեստագիտութիւն TDS ուսուցման լեզուն. ֆրանսերէն եւ անգլերէն դասընթացներ կ'աւարտուին առաջ եւ կ'աւարտուին ետք: Ընդհանուր Ելեկտրականութեան մասնագետ Գրաքերէն եւ գերմաներէն Համակարգիչի լեզուներ. Dos, Windows, WinWord & Excel, AutoCad, Photoshop, Coreldraw, Acess, Quark, Java, C++ Ռատիոյի եւ հեռատեսիլի մասնագետ Ըրեքտիվներու մասնագետ Մեքանիք եւ ինքնաշարժներու Ելեկտրականութիւն Ինքնաշարժներու Ելեկտրոնիկ մասնագետ

ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱՐԿ BYBLOS INSTITUTE Dora: 01 874600-1 Տոլոս. 01-874600 Haret Hreik: 01 273863-4 Հարէի Հիւր. 01-273863/4 Furn el Chebbak: 01 293175-6 Ֆուր Էլ Շեբբակ. 01-293175/6

### ՇԱՔԷՐ ԱՊՈՒ ՍԼԷՅՄԱՆԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ՝ ԸԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՍԻՆ

Հինգշաբթի, 19 Հոկտեմբերին, մահացաւ ճակնիկ երեսփոխան Շաքեր Ապու Սլէյման: Ան զանազան առիթներով դրական արտայայտութիւններ ունեցած էր Հայ Դատի մասին:

Ստորեւ կու տանք այս տարուան 17 Ապրիլին Հայկազեան համալսարանի Աւանդներու ակումբին կազմակերպած Հայկական Յեղասպանութեան 85ամեակին նուիրուած ձեռնարկին ընթացքին Շ. Ապու Սլէյմանին արտասանած խօսքին հիմնական միտքերը, ձեռնարկին ընթացքին Շ. Ապու Սլէյմանին արտասանած խօսքին հիմնական միտքերը, ձեռնարկին ընթացքին Շ. Ապու Սլէյմանին արտասանած Հայ Դատի նուիրուած պրակին մէջ անոր գրութիւնը, ինչպէս նաեւ Հայ Դատի մարմնին կողմէ «Ազգակ»-ի մէջ հրատարակուած լիբանանցի քաղաքագետներու եւ մտաւորականներու գրութիւններու շարքին 1 Մայիս 1997ին լոյս տեսած Շաքեր Ապու Սլէյմանի գրութիւնը:



ՇԱՔԷՐ ԱՊՈՒ ՍԼԷՅՄԱՆ

### ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ՁԵՆՆԱՐԿԻՆ ՇԱՔԷՐ ԱՊՈՒ ՍԼԷՅՄԱՆԻ ԽՕՍՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՔԵՐԸ

Երեսփոխան Շաքեր Ապու Սլէյման համառօտ կերպով անդրադարձաւ Հայ ժողովուրդի արժանիքներուն եւ Լիբանանի վերաջիննութեան ու ծաղկումին անոր բերած նպաստին: Ան նշեց, որ լիբանանահայ յայտնի ընթացքներու ու ամբողջացուց Հիբանանը՝ առանց իր ազգային ինքնութիւնը կորսնցնելու:

Ապա Ապու Սլէյման անդրադարձաւ Հայկական Ցեղասպանութեան ազգնութեան եւ անոր մասնակի ճանաչման պարագաներուն՝ եզրակացնելով, որ Հայկական Ցեղասպանութիւնը արդէն իսկ որոշ ճանաչում գտած ու ընդունուած է համաշխարհային հանրութեան կողմէ:

Երեսփոխան Ապու Սլէյման ըսաւ, թէ Հայ Դատը նախ եւ առաջ մարդկայնական դատ մըն է, ինչպէս նաեւ իրաւունքի, արդարութեան, ազատութեան եւ հաւատարմութեան սկզբունքներուն հաւատարմութեան չիւր մարդու դատն է:

Ապու Սլէյման իր խօսքին մէջ հաստատեց, որ մեծ պետութիւնները նախապէս ուրազած էին Հայկական հարցին մը գոյութիւնը: Անոր համար անիկա մնաց եւ տակաւին կը մնայ անլուծ դատ մը: Հայ Դատը չստացաւ իր արդար լուծումը, որովհետեւ միջազգային ընտանիքը անտեսեց ժողովուրդներուն ինքնորոշման իրաւունքը, ըսաւ ան:

Ապա բանախօսք անդրադարձաւ 1948ին ՄԱԿի մարդկային իրաւանց ենթախմբին մէջ կողմնակից, որուն մէջ (առաջին անգամն ըլլալով), կը նշուէր Հայկական Ցեղասպանութիւնը իրրեւ 20րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը:

Ան գնահատեց Հայ Դատին մշտնադարձ պահանջումը հայութեան կողմէ: Ապու Սլէյման իր խօսքը եզրափակելով՝ կոչ ուղղեց հայութեան, որ Շարունակէ ճիշդ թափել եւ յարատեւէ՝ պահանջատիրութեան եւ վնասուց հատուցման ուղղութեամբ,

- Իր ճիշդը ուղղէ ՄԱԿի եւ որոշում կայացնող մայրաքաղաքներու ուղղութեամբ,

- Յատուկ ուշադրութիւն դարձնէ քաղաքացիական ընկերութեան, որ այս օրերուն յատկանշական կշիռ ունի քաղաքացիական գործիչներուն վրայ:

Իր խօսքին աւարտին ան մատնանշեց, որ նման մեծութեամբ մարդկային դատ մը կրնայ պարագաներու լրերումով շուքի տակ մնալ չընեն մը բայց չի կրնար մեռնիլ:

«Հայ Դատը կենդանի կը մնայ մարդոց եւ պատմութեան յիշողութեան մէջ», եզրափակեց երեսփոխան Շաքեր Ապու Սլէյման:

### ԴԱՏԸ ՎԵՐԱՏԻՆ Կ'ԱՐԾԱՐԾՈՒԻ

Միջին Արեւելքը կը անկայացնէ օրէ օր աճող վերիվարումներու շրջան մը՝ սուր հարցերու եւ տագնապներու պատճառով: Այդ տագնապներէն շատերը յայտնի են եւ իրենց անմիջական ազդեցութիւնը ունին դէպքերու ընթացքին վրայ: Ինչպէս՝ Իրան - Իրաքեան պատերազմը, Իրանի իսլամական լեղափոխութիւնը եւ պաղեստինեան դատը, իսկ ուրիշներ քիչ յայտնի են, ինչպէս՝ Հայկական Հարցը: Բայց հակառակ իր կարեւորութեան, ան չի գրաւեր միեւնոյն դիրքը՝ Գկատի ունենալով իր վաղեմութիւնը եւ առօրեայ իրերայաջորդ դէպքերուն վրայ իր անմիջական ազդեցութիւնը չունենալով:

Սակայն այստեղ կու գամ ըսելու, որ վերջին շրջանին Հայ Դատը դարձաւ ի յայտ եկաւ՝ իրեն Արեւելքի ամենէն կարեւոր հարցերէն մէկը: Բայց շատ սեծ ճիգ կը պահանջուի, որպէսզի անիկա իր տեղը գրաւէ Միջին Արեւելքի համար առաջադրուած կարգաւորումներու ծիրին մէջ:

#### ◆ ԼՈՒԹՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱՎՈՐՈՒՄԸ

Քաղաքական, տնտեսական եւ ընկերային գեոքոնոմիկայի վրայ հայկական կուսակցութիւններու եւ հաստատութիւններու թափած եւ թափուող ճիգերը իրենց գործուն ազդեցութիւնը ունեցան Հայ Դատի վերարժարման դէպքերուն՝ ընթացքին մէջ դրուելուն եւ վառ պահելու աշխատանքին մէջ:

Սակայն այս ճիգերը, հակառակ իրենց անհրաժեշտութեան, քաւարար չեն:

Անշուշտ ՄԱԿի ծիրէն անդ թափուած ճիգերը հարցերու լուծման նպաստող միջազգային ճնշիչ մթնոլորտ մը կը նախապատրաստեն: Սակայն սեծ լուծումները երկու մեծ պետութիւններու մեծաշնորհներ են եւ քանքերը պէտք է մասնատրապէս իրենց ուղղուին եւ շարունակարար: Անոնք ի վիճակի են եւ կրնան ըսել, թէ առանձին կրնան գործնական լուծումներ գտնել, այն ալ՝ ՄԱԿի հովանաւորութեամբ եւ միջազգային շրջագծի մը մէջ:

#### ◆ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՆԱՉՈՒՄ

Անտարակոյս օրին թրքական կառավարութեան կողմէ իրագործուած Ցեղասպանութիւնը իրագործողներուն կապուած պատմական ոճիք մըն է, ինչպէս նաեւ՝ ամօթի խարան մըն է համայն մարդկութեան ճակտին վրայ: Ան սնայուն բեռ մըն է թրքական իրերայաջորդ կառավարութիւններու խղճին վրայ:

Ասոր համար ալ այս կառավարութիւնները պէտք էր քաջութիւնը ունենալին նախ եւ առաջ եղածը ճանաչելու եւ դատաւարտելու եւ այս կամ այն ձեւով ջարդերուն հատուցում կատարելու:

Այսօրուան Գեղամահիսն յաւազոյն օրինակն է անման գործելակերպին. ան դատաւարտեց նացիական արարքները եւ ընդունեց ոճիքները, ինչպէս նաեւ գոհներուն հատուցում կատարեց, այս ձեւով իր վրայէն թօթափեց այս բեռը՝ քաղաքակիրթ աշխարհի յարգանքին արժանանալով:

Կը յուսամ, որ Հայ Դատը իր արդարացի լուծման յանգի. պահանջատէր ունեցող իրաւունքը չի մեռնիր:

ՇԱՔԷՐ ԱՊՈՒ ՍԼԷՅՄԱՆ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ՊԷՏՔ Է ԴԱՏԱՊԱՐՏԷ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Հայ Դատը սրտերու եւ խիղճերու մէջ կենդանի ապրող դատ մըն է, որ մարտահրաւեր կը կարգայ ժամանակին: Օրերը կ'անցնին, բայց անիկա կը մնայ, որովհետեւ կը հանդիսանայ ճշգրտող արտայայտութիւնը մարդկային եւ բարոյական արժեքներու պաշտպանութեան ի խնդիր հերոսական կեցուածքի, արդարութեան եւ ազատութեան սկզբունքներուն:

Հայ Դատը առաջին աստիճանի մարդկային դատ մըն է, իսկ Հայկական Ցեղասպանութիւնը մարդկութեան դեմ ոճիք մը, որ խոցեց եւ տակաւին կը կակծացնէ մարդկային խիղճը՝ անցնող ժամանակի ընթացքին:

Հայկական Ցեղասպանութիւնը բռնաբարումն է արդարութեան, ազատութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքներուն, ինչպէս նաեւ ժխտումը մարդու իրաւունքներու համաշխարհային իրաւունքներով սահմանուած արժեքներուն: Ցեղասպանութիւնը մէկ օղակն էր մեծապետական այն քաղաքականութեան, որ մինչեւ այսօր հարուածի տակ կ'առնէ իրենց ազատութեան, ինքնութեան եւ հողին կառչած ժողովուրդները:

Միջազգային բազմաբնոյթ կազմակերպութիւնները պէտք է դատաւարտեն հայերու հաւաքական ջարդին պատասխանատուները, ջարդեր, որոնց ահատուութիւնը չազդուի ժամանակին հետ:

Այդ կազմակերպութիւնները պէտք է արժանին հատուցում ջարդերու զոհներուն, որովհետեւ լուրջինը կը համարուի քաջալերանք մը ուրիշներուն՝ սման ջարդեր կազմակերպելու ալ ժողովուրդներու դէմ:

Հայ Դատը իր տարողութեամբ կ'անդրանցնի աշխարհագրական եւ պատմական սահմանափակ ծիրերը: Անիկա ընդմիջու կը մնայ իրեն ամօթի խարան մարդկութեան դէմ այս ոճիքը գործողներուն ճակտին, խորհրդանշիչ մահուան յաղթած հայ քաջարի ժողովուրդի վերապրումի կամքին, ինչպէս նաեւ դատաւարակել օրինակ մը արդարութեան, ազատութեան, արժանապատուութեան եւ ինքնորոշման ի խնդիր պայքարին եւ գոհողութիւններուն:

ՇԱՔԷՐ ԱՊՈՒ ՍԼԷՅՄԱՆ

**ԸԱՅ ԳԻՐԵՒ**

**ՏԱՐԵԿԱՆ ԶԵՂՉ – ՎԱՃԱՌԵ**

**ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

**ՄԻՆՉԵՒ**

**70%**

**11Է 19 ՆՈՅԵՄԲԵՐ 2000**

### «ԹԵՆԵՐՈՆ - 2000»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԸՄԱՐ ՊԱՏՈՒԻՎԱՌԹԻՒՆ ԱՐ ՊԻՏԻ ՈՒՂՈՒԻ ՍԻԱՅԵԱԼ ՆԱԸՆԱԳՆԵՐ

Միացեալ Նահանգներու մէջ «Հայաստան» համահայկական հիմնադրամին կազմակերպելիք «Թենեթրոն - 2000»-ին հինգ շաբաթ առաջ, թելեթրոնի նախապատրաստական աշխատանքներուն մասնակցելու համար Հայաստանէն եւ Արցախէն պատուիրակութիւն մը պիտի ուղղուի Լոս Անճելէս: Պատուիրակութեան մաս պիտի կազմեն Լեոնայիս Դարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Օլէկ Եսայեան, Հայաստանի Շիրակի մարզպետ Ֆելիք Փորոնեան, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Զորաբեկ Մարտիրոսեան, եւ «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէն Վահան Տէր Ղեւոնդեան:

Շրջապատյոր ծրագրուած է «Թենեթրոն - 2000»-ի համար մասնակցութիւն, քարոզչութիւն եւ միութեան օժանդակութիւն ապահովելու համար: Թելեթրոնը ընթացքին հաւաքուած գումարը պիտի յատկացուի ամբողջացնելու համար Դարաբաղի Հիւսիս - Հարաւ մայրուղին, ինչպէս նաեւ Հայաստանի ազգային զօտիին մէջ չորս դպրոցներու կառուցումին: Պատուիրակութիւնը, որ Միացեալ Նահանգներ պիտի մնայ 24 Հոկտեմբերէն 1 Նոյեմբեր, պիտի այցելէ Լիւ Նոքս, Ուաշինկթըն, Լոս Անճելէս եւ Ֆրէզնո: Պատուիրակութիւնը հանդիպումներ պիտի ունենայ ամերիկահայ գաղութի ղեկավարներուն, կազմակերպութիւններուն եւ մամուլին հետ:

### ԶԱՐԵՀԵԱՆ ՓԱՂԱՆԳԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 10ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

### ԲԱՆԱԿՈՒՄ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ



Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մասնաճիւղի Զարեհեան փառանքի հիմնադրութեան 10րդ տարեդարձին առիթով, մասնաճիւղին խմբապետութիւնը 7էն 8 Հոկտեմբերին կազմակերպեց ընկերային բանակում մը Այնճարի կղզիին մէջ, մասնակցութեամբ 33 գործօն եւ նախկին Զարեհեան փառանքի եղբայր - քույրերուն:

### ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՕԾՈՒՄ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութիւններուն ծիրէն ներս կիրակի, 8 Հոկտեմբերին, տեղի ունեցաւ Աշտարակի Մուղնի վիղի Ս. Գէորգ եկեղեցւոյ վերածնունդը: Արարողութեան նախագահեց Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը:

Այդ առիթով Երեւանէն Աշտարակ ժամանեցին բազմաթիւ հոգեւորականներ, եկեղեցւոյ բարերարները, պետական անձնաւորութիւններ, ՀԱՍԿԻ (Հ.Մ.Ը.Մ.) անդամներ եւ հարկւրաւոր հաւատացեալներ:

Նախօրօք կատարուած էր եկեղեցւոյ աւազանին եւ 16 սիւներուն օծումը, իսկ Գարեգին Բ. կաթողիկոս օծեց մայր խորանը: Եկեղեցական արարողութեան երգչախումբները, ղեկավարութեամբ Յարութիւն Թօփիկեանի: Պատարագի աւարտին եկեղեցական թափօրը, առաջնորդութեամբ Ս. Գէորգ Զօրավարի աշին, կատարեց մատաղօրհնէք:

Այս առիթով Հայաստանի մէջ Կարէն Մաթեոսեանի աշխատասիրութեամբ հրատարակուեցաւ «Մուղնու Ս. Գէորգ վանքը» խորագրեալ պատկերազարդ գրքոյ՝ որ ներկայացուած են վանքին պատմութիւնը, ճարտարապետութիւնը, աւանդութիւնները, մասունքներն ու գանձերը:

Նշենք, որ թէ՛ եկեղեցւոյ վերածնունդը եւ թէ՛ գրքոյ կրնան հրատարակութիւնը իրականացած են Մեսրոպ արք. Ալեքանի ջանքերով:

**MESROBIAN TECHNICAL COLLEGE**

1982

THE PIONEER IN TECHNICAL EDUCATION

**HONORABLE RESULTS IN THE OFFICIAL EXAMS 2000**

KINDERGARTEN ( JARDINIÈRE ) 100% COMMERCIAL SCIENCE 75%

**Morning, Afternoon & Night Classes**

**English & French Section**

**Technical Baccalaureate B.T.**

Sales & Commercial Relations Kindergarten (Jardinière)  
Architecture Drawings Interior Design

**Private Specializations ( Officially Reconnized )**

- Computer Courses
- Foreign Languages
- Business Studies
- Travel & Tourism "Ticketing"
- Jewellery Design
- Diamond Setting
- Wax Modeling
- Make - Up
- Hair Styling
- Computer Repair "Hardware"
- TV & Video Repair
- Car Electricity

**New**

1- Cambridge University Certificate 2- Private Classes 3- Incredible Payment Facilities

Arax Street, Bourj Hammoud Tel: 01 260 504 - 254 938/9 Fax: 01 262 955  
Email:mesroba@dm.net.lb Web Site:www.mesrobian.com  
N.B. Parking Assured

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐԺԷՔՆԵՐ

(ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԵՆ)

Թիրիմացույթան կամ քաղաքական ասան շահարկումի հետեւանք են ինչպէս ազգային միասնականութեան եւ կուսակցականութեան, նոյնպէս եւ պետականութեան ու կուսակցականութեան միջեւ հակասութիւն ու հակադրութիւն տեսնելու, սերմանելու կամ քարոզելու մտտեցումները: Յատկապէս երբ խօսքը կը վերաբերի Հայաստանի ու հայութեան օրինակով երկիրներու եւ ազգերու, որոնք պատմական անընդապատ դաստարոյններու բերմամբ, ամբողջ դարեր զրկուած են սեփական պետականութիւն ունենալու եւ գայն կայուն ու անոր հիմքով վրայ ստորսխելու քաղաքակիրթ հասարակարգերու բնականոն խորոզելիցներով օժտելու հնարաւորութեան:

Կը բաւէ ընդհանուր հաշուելոյի բերել վերանկայացեալ Հայաստանի Հանրապետութեան տասնամեայ կենսափորձը, հաստատելու համար թէ ազգային պետականութեան վերականգնումի ու կառուցման գործը որքա՞ն տուժեց, որովհետեւ, շատ մը այլ ստորոգելիներու կողքին, գուրկ էր մանաւանդ կուսակցութիւններու եւ կուսակցականութեան կրուանքը:

Ի վերջոյ պետականութիւնը բարդ ու հաստարակշռուած համարումն է մէկ կողմէ՝ իշխանութեան համակարգին եւ պետական վարչաձեւերնային, իսկ միւս կողմէ՝ քաղաքական-հասարակական-քաղաքացիական կառոյցներով արտայայտուող ժողովուրդին: Առանց առաջինի՝ անհեթեթ է խօսիլ պետականութեան մասին: Բայց առանց երկրորդին, դէմ յանդիման կը կանգնիք պետականութեան նմանակումին, որ լաւագոյն պարագային կրնայ վերածուիլ իրաւական ու ժողովրդապարտական յարաբարանքով ներկայացող իշխանութեան ազարակի:

Փաստօրէն տարբեր պատասխան չունի մեր ժողովուրդը տագնապեցնող այն դառն հարցականը, որ ինչու համաժողովրդային շարժման մղումով ու թափուով ծաւալած ազատ ու անկախ պետականութեան վերակառուցման մեծ գործը գեղին դարձաւ իշխանութեան ծարաւ փոքրամասնութեան մը ետակերտոն շահանդուութեանց եւ կամայականութիւններուն: Չարիքին արմատը խոր է անշուշտ, որովհետեւ պետականութիւնն ու կուսակցականութիւնը նոյնացնելու խորհրդային բնորոշ գլխիվայր շրջուած տեսքով վերահաստատուեցաւ այս անգամ ՀՀՇՇԿԿ-ական տարբերակով, որ բեւեռացման տարաւ ու փորձեց անհամատեղելի եւ անհամադրելի դարձնել այլապէս իրարմով պայմանաւորուած, խորապէս լրացուցիչ այդ արժեքները:

Եթէ օրին ոմանց աչքին պարզ խորխափում կրնար թուիլ կուսակցութիւնը դառնալու կամ շարժում մնալու ՀՀՇՇԿԿ-ական ներքին բանավէճը, այսօր արդէն կասկած վեր է. որ շինծու երկրնտրանք էր ասիական խորքին մէջ կը փորձեր մոլորանքի մատուցել պետականութիւնն ու կուսակցականութիւնը նոյնացուցած խորհրդային բնորոշ ամէն գնով ձեռքբազատելու պահանջ ունեցող մեր ժողովուրդը:

Կուսակցութիւններու եւ կուսակցականութեան վարկաբեկումին հետամուտ մոլորեցման այդ ռազմավարութիւնը կը սնանդէր երկու աղբիւր. ա) իր խորացմէր եւ ընդհանրապէս կուսակցութիւններու գոյութեան վրայ կը տարածեր կուսակցականութեան խորհրդային բնորոշ ՈՒԿԱՍՏԱՄԸ ժողովրդային ատելութիւնը, բ) ամէն ճիւղ կը թափէր, որպէսզի հաստարապէս արգելաւոր թէ ազգային կուսակցութեանց հայրենիք վերադարձը, թէ հայրենի հողի վրայ կազմաւորուող կուսակցութեանց լիարժեք կայացումը:

Այսօր արդէն պարզօրէն տեսանելի ու հասկնալի է, որ միայն այդ ճամբով վերանկայացեալ Հայաստանի իշխանութիւնը առաջին վարչախումբը կրնար յաջողիլ իշխանութեան տիրանալու եւ պետական ու ազգային ողջ հարստութիւնը սեփականացնելու աւարելու իր միակ նպատակին իրականացման մէջ:

Օրինաչափ իրողութիւն է, որ միայն կուսակցութիւններու եւ կուսակցականութեան առկայութեան պետական իշխանութեան համակարգերը հակակշռելի կը դառնան ժողովուրդին կողմէ: Իսկ կեղծոնաձիգ ու ամբողջատիրական հասարակարգէ իբր թէ ազատ-շուկայական կարգերու անցնելու կարգախօսքը շահարկող որեւէ վարչախումբ, ինչպէս փիւնակուցեալ Հայաստանին ու հայութեան, ամէն պատճառ ունէր եւ պիտի ունենայ, որպէսզի կրկնակ իմաստով շարքերէ ելող հակակշռելի տակ շտուկով ժողովուրդային շարքեր ըլլան անոնք թէ կուսակցական: Եթէ իր անարգել շահատակութեանց արգելք կանգնող կուսակցութիւններ կան արդէն, ու ըստ ամենայնի կային, ամէն գնով փորձեց ու պիտի շարունակէ փորձել, որ խնջնդոտ անոնք լիիարա գործունէութիւնը, իսկ մեր կազմաւորուող կուսակցութեանց պարագային, ամէն ճիւղ պիտի թափէ, որպէսզի անոնք չկարենան օժտուիլ ներքին ժողովրդավարութեան ու հակակշռումի գործելակերպով...

Ձարմանալի չէ, հետեւաբար, որ տարիներու վրայ տարածուած այդ նեցգ ռազմավարութեան հետեւանքով ներքաղաքական թէ ընկերային-տնտեսական ծանրագոյն տագնապէ անցնող մեր ժողովուրդին մէջ, այսօր արիւմտարիւն չէ տոկոսը անոնց, որոնք հակամետ են բոլոր կուսակցութիւններն ու քաղաքական գործիչները «լուալու նոյն կեղտոտ ջուրով» իբրեւ իշխանութեան «կարկանդակ»էն բաժնի ունենալու համար ամէն սկզբունք եւ յանձնառութեան հրաժարելու պատրաստ «պատեհապաշտներ»...

Նոյնն է պատճառը նաեւ այն հետեւողական մերժումին, որ ընդ կուսակցութիւնը առաջին իսկ օրէն որդեգրեց նման ամեն գնով իշխանութեան տիրանալու ինքնանպատակ վարքագր-ծին դէմ:

Այս աստիճան խոր է շարքին արմատը եւ հոն պետք է փնտնել բացատրութիւնը այն տողքային, որուն մատուցած է 1998ի Փետրուարին սկսած իշխանափոխութեան փորձը: Այնքան ատեն որ քաղաքական համակարգը արտասական, սահմանադրական եւ ժողովրդապարական արմամներով, բարեկարգման չէ ենթարկուած ու չէ գտած այն ուղին, որ զինք պիտի ձեռքբազատէ իշխանութեան համար մղուող ինքնանպատակ մրցակցայարձակներէն, կարելի չէ վերջնական յոյս կապել ղեկավար դիրքերու վրայ ամենուր փոփոխութեանց:

Ժողովրդավարական ներքին հակակշռումի աշխատակարգով, յատկապէս սեփական ժողովուրդին հաշիւ տալու զգալի արձույթով գործող պետականութեան քայլ առ քայլ կայացումը, այս առումով, առաջնահերթ օրակարգ դարձած է Դաշնակցութեան համար: Ներկազմակերպական ժողովրդավարութեան եւ շարքերէն դէպի վեր բարձրացող հասարական կամ թիւ բիւրեղացման եւ, այդ կարգով, դէպի շարքեր վերադարձող որդշումներու կարգապահ գործադրման գործելակերպին պետական-քաղաքական դաշտի վրայ ճառագայթումը այն մեծ ներդրումն է, որ գաղափարական մեր ընտանիքը պարտաւոր է հայոց վերանկայացեալ պետականութեան՝ ի խնդիր անոր լիարժեք հաստատման ու ամրապնդման իսկ:

## ԱՐՄԵՆՓՐԷՍԻ ԻՍԿԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ

# ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՈՂՈՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՒ ՈՂ ԹԵ 1922, ԱՅՆ 1918 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Տասնեակ տարիներ շարունակ ընդունուած էր սաեւէ Հայաստանի պետական լրատուական գործակալութեան պատմութիւնը սկսուած է 1922 թուականին Հոկտեմբերի 2ին, երբ Հայաստանի խորհրդային Հանրապետութեան կենտրոնական գործադիր կոմիտէի որոշմամբ վերջինիս աւելցրին Հիմնադրուեց Հայկական Հեռագրական Գործակալութիւնը (ՀՀԳ): 1936 թուականի Անդրկովկասեան Դաշնութեան լուծարմամբ գործակալութիւնն անցաւ խորհրդային Հայաստանի կառավարութեան ժողովրդային կոմիտեաների խորհրդի ենթակալութեան տակ: Հետագայում՝ 1972 թուականին, վերանուանուեց ԱրմԷՎիփր.ս: Այսպիսին էր պատմական այն տեղեկանքը, որ մատուցուած էր գործակալութեան լրագրողներին:

Այսօր մեր սեղանին է «Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի օրէնքները (1918-1920 թուականներին)» փաստաթղթերի ժողովածուն, որը լոյս է տեսել 1998 թուականին Հայաստանի Ազգային ժողովի ու պատմութեան կենտրոնական պետական արխիւի հովանուներքով, արխիւի տնօրէն Միլզոյեանի ու պաշտօնակազմի ղեկավար Ֆելիք Մամիկոնեանի խմբագրութեամբ: Թերթերով հետաքրքրուելու այդ ժողովածուն՝ համոզուած ենք, որ մեր իմացածը լավ առասպել էր: Իսկ իրականութիւնն այլ է:

... 1918 թուականի ցրտաշունչ ձմեռ է: Դեկտեմբերի 18ին հայոց խորհրդարանը ընդունում է օրէնք «Հայաստանի Հանրապետութեան հեռագրական գործակալութեան մասին»:

«Տեղեկատուութեան նպատակով երեւանում հիմնուած է Հայաստանի Հանրապետութեան հեռագրական գործակալութիւնը», ազդարարում է փաստաթղթի առաջին յօդուածում: Բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւնները պարտաւոր են տեղեկութիւններ տալ յիշեալ գործակալութեանը: Արգելու է տեղեկութիւններ տալ մասնաւոր անձանց եւ հաստատութիւններին, նախքան նրանց՝ գործակալութեան հաղորդելը, ընդգծուած է օրէնքում: «Արգելում է գործակալութեան հեռագրերի արտատպումը գործակալութեան բաժանորդ թերթերից 48 ժամուան ընթացքում սրանց լոյս տեսնելուց յետոյ»:

Օրէնքով սահմանուած են, այսօրւան լեզուով ասած, լրատուութեան սակագները:

«Գործակալութեան հեռագրերի բաժանորդագիրը որոշուած է ամսական՝ երեւանի պարբերական հրատարակութիւնների համար 300 ռուբլի, գաւառները՝ 200 ռուբլի, իսկ մասնաւոր անձանց համար, առանց օրինակների բազմացման իրաւունքի, 50 ռ: Հայաստանի խորհրդի նիստերի մասին եղած հեռագրերի համար առնուած է լրացուցիչ 100 ռ(ս, այսօրուան լրացուցիչ տեղեկատուական արտադրանքն է - Տ. Լ.) եւ ընդհանուր հեռագրերը տալիս են տեղեկութիւններ Հայաստանի խորհրդի կենտրոնի միայն կաբեւորագոյն ղեկավարի մասին:

Առաջին Հանրապետութեան օրէնսդիրները մտածել են նաեւ լրատուութեան բովանդակութեան մասին: «Գործակալութեան հեռագրերն ամէն անգամ պիտի ունենան ոչ պակաս քան 150 սոյլ՝ 25 տառ իւրաքանչիւր սոյնում: Եթէ ամսուան ընթացքում սոյնի թիւը աւելի լինի որոշուած չափից, աւելցուած անցնող է հետեւեալ ամսուան հաշուին: Նոյնչափ տողեր պիտի ունենան եւ Հայաստանի խորհրդի նիստերի մասին եղած հեռագրերը:

Հետաքրքրական է, որ օրէնքով սահմանուած է Հայաստանի հեռագրական գործակալութեան ամսական նախահաշիւն ու հաստիքացուցակը:

- 1. Երեւանի չորս թերթերից 300ական ռ.՝ 1200 ռ.
  - 2. Գաւառական թերթերից՝ 600 ռ.
  - 3. Հայաստանի սահմաններից դուրս գտնուող օրկաններից՝ 1800 ռ.
  - 4. Մասնաւոր բաժանորդներից՝ 500 ռ. Ընդամենը՝ 4100 ռ.
- Իսկ ծախսերը հետեւեալն են. կառավարչին՝ 900 ռ., քարտուղարին՝ 600 ռ., սուբհանդակին՝ 250 ռ., հեռագրական ծախսեր՝ 700 ռ., ընդամենը՝ 4750 ռ.»:
- Ուրեմն, մեզմտ ասած, պատմական ճշմարտութիւնն է՛ր այն առասպելը, որ Հայաստանի հեռագրական գործակալութիւնը հիմնադրուել է 1922 թուականին: Գործակալութեան կենսագրութեան սյուղը պէտք է 4 տարով յետ տանել, ուստի դառնում է ոչ թէ 78, այլ 82 տարեկան:

Առաջին Հանրապետութեան օրէնսդիրները չեն սահմանափակուել մէկ օրէնքով Հայաստանի հեռագրական

գործակալութեան մասին: 1920 թուականի Ապրիլի 4ին հաստատուած է մէկ այլ օրէնք, ուր մանրամասնուած են Հայաստանի հեռագրական գործակալութեան խնդիրները, եւ որը «վերացնում էր» 1918 թուականի Դեկտեմբերի 18ի օրէնքը:

Հայաստանի հեռագրական գործակալութեան նպատակն է հաղորդել Հայաստանի ներսը եւ արտասահման քաղաքական - տնտեսական, ֆինանսական եւ հասարակական հետաքրքրութիւններ կայացնող այլ տեղեկութիւններ: «Հայաստանի հեռագրական գործակալութիւնը գտնուած է Հայաստանի կառավարութեան կից, գործում է նախարարների խորհրդի անմիջական հսկողութեան տակ եւ առաջնորդուած է նրա հրահանգներով:

Հայաստանի հեռագրական գործակալութիւնը «կարող է մայրաքաղաքից եւ երկրից դուրս ունենալ բաժանուններ կամ գործակալներ, որոնք հաստատուած են գործակալութեան վարչի կարգադրութեամբ: Գործակալութիւնը կարող է անմիջական համաձայնութեան մէջ մտնել ուրիշ հեռագրական գործակալութիւնների հետ՝ նրանցից տեղեկութիւններ ստանալու նպատակով:

Կառավարական կարգավիճակ ունեցող Հայաստանի հեռագրական գործակալութեան իրաւունք էր տրուած «պետական հեռագրով ամէն օր տալ ձրի մինչեւ 600 բառով հեռագրի թէ Հայաստանի սահմաններում եւ թէ արտասահմանում: Խորհրդարանի նստաշրջանում բառերի այս քանակը կարող է կրկնապատկուել, եթէ գործակալութիւնը հաղորդում է խորհրդարանի նիստի հաշվետուութիւնը», նախատեսել էին օրէնսդիրները: Ի դէպ, «յիշուած բառերի քանակից 600 բառ աւելիի համար գործակալութիւնը վճարում է գումարիւն ունեցող հեռագրավարի 50 սոյնուր»:

Գործակալութեան թղթակցների՝ Հայաստանի գանազան մասերից գործակալութեան անունով ուղարկուած հեռագրերը հեռագրատուք հաղորդուած է ձրի: Նոյնպէս ձրի են հաղորդուած եւ գործակալութեան հեռագրերը իր իրականութիւնը եւ գործակալներին անունով: Նմանապէս եւ գործակալութեան փոստային առաքումները կատարուած են ձրի՝ համահասարակ կառավարութեան առաքումներին:

Միւս արտօնութիւնն այն է, որ «գործակալութիւնն իրաւունք ունի օրական երկու անգամ ձրի խօսելը. ամէն անգամ 5 րոպէ՝ միջպետական եւ միջքաղաքային հեռախօսով: Նշանակուած ժամկէտից աւելի խօսելիս վճարում են արժէքի կէսը»:

Հայաստանի հեռագրական գործակալութիւնը իր ստացած հեռագրերը ձրիաբար ուղարկում է այն հիմնարկութիւններին ու անձերին, որոնց ցուցակը ներկայացնում է խորհրդարանի նախագահութիւնը եւ նախարարների խորհուրդը: Վերջապէս, օրէնքն արգելում է Հայաստանի հեռագրական գործակալութեան «հեռագրերի արտատպումը գործակալութեան տեղեկագիրների լոյս տեսնելուց յետոյ 48 ժամուան ընթացքում»:

1920 թուականի Մայիսի 26ին խորհրդարանը կրկին անդրադառնում է հեռագրական գործակալութեան խնդիրներին: Այդ օրն ընդունուած օրէնքի համաձայն գործակալութեանը տրուած է 614,91680 ռուբլու վարկ՝ «1920 թուականի Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսներին ստիպողական եւ յաւելեալ ծախսերի համար»:

Ծառք, մեր ձեռքի տակ չեն Առաջին Հանրապետութեան կառավարութեան որոշումները Հայաստանի հեռագրական գործակալութեան մասին: Մեծք կը շարունակենք մեր որոնումները եւ կը հրապարակենք եղած փաստաթղթերը:

Ո՛րն է ու՞ր տանա՞մեակ մեզանից հեռու այդ իրադարձութիւններն ու ընդունած փաստաթղթերի դասը, խորհուրդը: Թէ՛ Առաջին, թէ՛ երկրորդ հանրապետութիւնների կառավարութիւնները, իշխանութիւններն առաջնակարգ նշանակութիւն են ստել պետական լրատուական գործակալութեանը, ուղարկութեան կենտրոնում պահել այդ հիմնարկութեան պահանջները: Նոյնիսկ սովի, համաճարակների ու գաղութականների երկիր եղած Առաջին Հանրապետութեան պայմաններում իշխանութիւնները չէին զլանում Հայաստանի հեռագրական գործակալութեան լրացուցիչ դիւրուարութիւններ ու արտօնութիւններ արձադրել:

Այսօր վիճակը բոլորովին այլ է: Հայաստան ունի անհամեմատ աւելի

# ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԶԱԻԱԽՔԻ ՇՈՒՐՋ

Վերջերս մամուլում սկսել է աւելի լաճախ արծարծուել Ջաւախքում եւ նրա շուրջ ստեղծուած կացութիւնը՝ մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման, ռուսական ռազմական խարխախների դուրսբերման եւ հայ-վրացական յարաբերութիւններում առկայ կանխագործի հաստատութիւնը:

Բայց իրականում այս ամէնը գործընթացի երեւացող կողմն է միայն, քանզի Ջաւախքի շուրջ ծաւալուած աշխարհաքաղաքական աւելի մեծ խաղ, իսկ վերը նշուած խնդիրներն օգտագործուած են սոսկ որպէս մանրադրամներ: Խաղի իմաստն ակնյայտ է՝ միայն գամից մի քանի ուժեր փորձում են ապակայունացնել շրջանը՝ իւրաքանչիւրը պիտոք ջրում իր «սկզբնական» որսալու համար: Արտաքին ուժերի այդ քայլերին անմասն չեն նաեւ վրաց իշխանութիւնները, որոնք Եւրոպայի խորհուրդ մտուք գործելու ընթացքում համաձայնութիւն են տուել մեսխեթցի թուրքերի վերաբնակեցմանը եւ այժմ էլ անընդհատ թմրկահարում են թուրք վերաբնակիչների ու հայերի հնարաւոր բախումների գաղափարը եւ միաժամանակ համատեղ գորսավարժութիւններ անցկացնում թուրքիայի հետ:

